ԳԱՐԻԿ ԲԱՆԴՈՒՐՅԱՆ

ՕԱԶԻՍ

ՏԳ

ԳԱՐԻԿ ԲԱՂԴՈՒՐՅԱՆ

ՕԱԶԻՍ

Բանաստեղծություններ և պոեմներ

Ա 1 / 18269

ԼԵՆԻՆԱԿԱՆ ՊՐԻՈՒՄՈՎ ԿՈՄՍՈՄՈԼԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՍԿԱՎԵՍ ՆՅՈՒ

ԵՐԵՎԱՆ
«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
1987

ԳՄԴ 84Հ7—5
Բ 276

Խմբագիր՝ ԼԵՈՒԴՎԻԳ ԴՈՒՐՅԱՆ

ԲԱՆԴՈՒՐՅԱՆ, Գ. Ա.

Բ 276 Օազիս: Բանաստեղծություններ և պոեմներ /Գարիկ Բանդուրյան.— Եր.: Սովետ. գրող, 1987.— էջ 408:

Գարիկ Բանդուրյանի «Օազիս» ժողովածուն ընդգրկում է վաթսունամյա բանաստեղծի հրատարակած գրքերի («Ջրվեժի երգը», «Արցունքոտ ժպիտ», «Կյանքը մահվան դեմ», «Աշխարհը գրկել եմ ուզում») լավագույն բանաստեղծությունները, բալլադները, չափածո նովելները, «Ողջակիզվող հոգին», «Ջոկոնդա» պոեմներից հատվածներ, նոր, անտիպ «Աղոթք արևին» ժողովածուի ստեղծագործությունները, որոնք պատկերացում են տալիս նրա ստեղծագործական լայն ընդգրկման մասին:

Բ $\frac{4702080202(91)}{705(01)87}$ –87 «S» ԳՄԴ 84Հ7—5

© «Սովետական գրող» հրատարակչություն, 1987

ԿՈՄԻՏԱՍ

Սև սքեմի մեջ հայոց անցյալի—
Դու՝ հույսի բուրվառ ու լույսի կանթեղ,
Մոխիրների տակ մահի ու ցավի—
Դու՝ անմարելի՜ գոյության անթեղ։

Դու Հայաստանն ես՝ ծո՜խ ճայնագրված.
Մասիսին դիպած արեգակ ու հով,
Քաղհան, պատարագ, հարսնապար, նվագ,
Անուշ քուն, երազ՝ լուսնյակ գիշերով։

Դու՝ մայր հողի կա՜նչ, կարոտի կռո՛ւնկ,
Անտուն պանդուխտի սի՜րտը փլատակ,
Քար աշխարհի դեմ՝ քարացած բռունցք
Ու գարո՜ւն՝ վրան ճյունեղեն պատանք։

Դու՝ ճյունի տակից կանաչող գարուն,
Ժպտացող արև՝ ամպերից վշտի,—
Նորից չափ տալիս, խմբերգն ես վարում
Հայրենահավաք հայ ժողովրդի։

Ճախրող ձեռքերով աղավնանման
Մեր ճամփին հույսի ծիլե՜ր ես ցանում,
Դառնում կարկա՛չը մեր արդար արյան
Եվ հավերժությա՜ն կարկաչն ես դառնում։

1967